

ԿՐԹՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԺՆՈՒՆԳԸ

Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ
արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղս արա-
րէք զշաւիղս Նորա: Կատարեալ է ժամանակ,
և հասեալ է արքայութիւն Աստուծոյ, ապաշ-
խարհեցէք՝ և հաւատացէք յԱւետարանն:

Մարկոս Գլ. Ա.

Արեւելիք Հռովմի տիրապետութեան ներքոյ էր: Յայն օրէնսդիր և հաւաստութեան և համեմատական արդարութեան ձգտող օրէնքները մոռացութեան էին տրուած: Հռովմէական ծերակոյտը վաղուց արդէն դոյու-
թիւն չունէր և սկսուել էր կայսրների իշխանութիւնը: Հռովմէական լէգէօնները յաղթանակ և դափնիններ էին վաստակում՝ կեսարների համար, իսկ ժողովուրդը յաղ-
թական կամարներ կանգնում նրանց ճանապարհներին: Սպարտակի առաջնորդութեամբ սկսուած ստրուկների ապստամբութիւնն իտալիայում ճնշուել էր: Ստեղծուել էին իրաւատէր և իրաւազուրկ դասակարգեր, իշխող և ստրուկ աղգեր, աշխատողներ և սոված մնացողներ, անդործներ, բայց միշտ կուշտ և հռովմէական կեանքի առասպելական ճոխութեան մէջ ապրողներ: Կեանքը, մտաւոր կեանքը մեռել էր և ամենայն շարժում և աշխատանք կատար-
ւում էր անձնաւորութեան շուրջը և նրա փարթամու-
թեան ու վայելքների համար: Մարդիկ ապրում էին խիստ անհաշտ դասակարգերի բաժանուած: Պատրիցիաները շոյլ և զեղխ, երբ յաղենում էին աշխարհի վայելքներով և ուժասպառ դառնում, յաճախ գնում էին բաղանիք և բաց անում իրենց երակները այլ ևս չ'ապրելու հա-
մար, այդ նոյնը երբեմն սահմանւում էր օրակէս պատիժ

կեսարներինց՝ Օգոստոս կայսեր թագաւորութեան ժամանակ, որը նուաճեց առաջաւոր Ասիան և Հռովմի ընդարձակ կայսրութեան դա՛ բարձրացաւ, երբ արեւմուտքում հայ և տեսարաններ էր խնդրում՝ անգործ և մտքով անշարժ ամբոխը, միջերկրական ծովի արեւելեան ափերին ապրող Փիւնիկէի և Պաղեստինի հպատակ ժողովուրդներն երկունքի մէջ էին, Փիւնիկէյում՝ յայտնի էին մարդասիրութիւն և հաւասարութիւն քարոզող մի քանի դիտնականներ, իսկ Պաղեստինում, որ Մովսիսական օրէնքին ձեւական և արտաքուստ միայն ծառայողները երկար ժամանակ կաշկանդել էին մարդկանց մտքերը, մի ինչ որ նոր բան էին որոնում, սպասում էին նոր հրաշալիքը, որովհետեւ ժամանակը հասունացել էր. հասել էր մարդարէներէի դուշակած տարեշրջանը։ Չեւական և արտաքին կեղծ բարեպաշտութեան հետ, որն աշխատում էր ոյքան կարելի է նեղ գծել մարդկանց մտածողութեան շրջանը և նրա մէջ փակել մարդուս մտքի թռիչքն ու բանական կեանքի ծարաւը, սկսուել էին ձմեռնային ամիսներ։ Փարիսեցիների և Հռովմէական զինուորների հետ միասին դաշնակցել էր և ձմեռը, ազատ ասպարէզ բացել և ճնշել, սառցրել էր գեղածիծաղ հարաւը։ Այն ժամանակաշրջանն էր, երբ հազիւ թէ մարդուս միտքը ընդունակ է լինում անձնապաշտպանութիւնից դուրս մի այլ բանով զբաղուելու։ Դիշեր էր, ցուրտ ու խաւար, ամենքը քաշուել տուն էին մտել. բնութիւնը մարդկանց հետ կարծէք ճնշուել լուել էր. հեռու շատ հեռու գուցէ լսում էր ձմռան փութորկի և բորեաղի գզրգոցը Լիբանանի սարերի կատարների և միջերկրականի կատաղի ալիքների որտան ու հառաչը նրա արեւելեան և հիւսիսային եղերքներին։ Ամենքը պաշտպանուած, իրենց տան հովանու տակն էին և հանգիստ քնած, բացի խեղճ և պարզամիտ հովիւներէից, որոնք իրենց ոչխարների պահպանութեան համար միայն դուրս էին մնացել։ Լուռ, ձմրային երկար գիշերով գիտէ ինչեր էին անցնում այդ հովիւների պարզ գլխներում. ո՞վ գիտէ ինչեր էին մտածում այդ միշտ ու-

րիչներէի համար աշխատող մարդիկ և ինչ հաշիւներ էին անում, երբ յանկարծ մի անսովոր աստղ տեսան երկրնքում: Այդ արտասովոր երեոյթի քննութեամբ զբաղուած, յանկարծ Տիրոջ հրեշտակն երեւցաւ նրանց, Աստուծոյ փառք ծագեց նրանց վրայ և նրանք տաստիկ վախեցան: Հրեշտակն ասաց նրանց. մի վախենար, որովհետեւ ես ձեզ այսօր մեծ ուրախութիւն եմ աւետում, որ և ամբողջ ժողովրդի ուրախութիւնը պէտք է լինի. այսօր ձեզ Փրկիչ ծնունդ Դաւթի քաղաքում: Յանկարծ նոյն հրեշտակի հետ երեւցան և երկնային զօրաց քաղմութիւն, որոնք օրհնում էին Աստուծուն և ասում. փառք Արարչին երկնքում, խաղաղութիւն երկրի վրայ և հաճութիւն մարդկանց:

Հովիւները զարմայած տեսած և լսածներէի վրայ, շտապեցին դէպի Բեթղեհէմ և քաղաքից հեռու մի այրի մէջ գտան Մանուկ ճշմարտութիւնը խանձարուրի մէջ փաթածուած և մոռրի մէջ դրած և Յովսէփն ու Մարիամը նրա հետ: Թէև դեռ Մանուկ, անգոր սւ անխօս, թէ և դեռ Աստուածորդու սիրունիկ բերանը անգոր էր դատապարտելու մարդկանց անարդար և անհաւատարկեանքը, դատապարտելու անօրէնութիւնն և կեղծ հաւատը, սակայն նրա ծննդեան նշանները ակներեւ էին և միանգամայն բաւական ժամանակակից մարդկանց սարսափ աղբելու և աւելի սարսափեցին նրանք, որոնք իրենց դիրքով և պաշտօններով աւելի էին անարդար և յանցաւոր, և ահա վախեցած Հերովդէսը հրամայեց կոտորել բոլոր մանուկներին, որոնք երկու տարեկանից մեծ չէին և յոյս ունէր նրանց հետ սպանել նաև Աստուածորդուն: Ճշմարտութեան ծնունդը չանցաւ առանց անմեղների արեան, նրա ճանապարհը ներկուեց վաղադոյն արիւնով, սակայն Տիրոջ հրեշտակը փրկեց նորածինն և դէպի Եգիպտոս առաջնորդեց նրան իւր ծնողների հետ: Ճեւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ:


Օգոստոս կայսրը մեռել էր և թագաւորում էր Տիրբերիսոն: Նրա թագաւորութեան տասն և հինգերորդ

տարին Յարգանանի կողմերում՝ յայտնուեց Զարարիայի որդի Յովհաննէսը անապատ քաշուած, որտեղ սկսեց քարոզել ժողովրդին ապաշխարել, փախչիլ մեղքերից և մեղաւոր կեանքից, պատրաստել ճշմարտութեան հանապարհը, մարբուիլ այդ ճշմարտութիւնն ընդունելու, որովհետեւ նա արդէն մօտեցել էր։ Մըարէք այսուհետեւ պատուաւ արժանիս ապաշխարութեան։ Աւ մի սկսանիցիք աօել, եթէ ունիմք հայր զՍրահամ, զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Աստուած ի քարանցս յայտցանէ յարուցանել որդիս Մըրահամու։ Բայց ահաւասիկ տառար առարմին ծառոց կա, ամենայն ծառ, որ ոչ առնէ զպտուղ բարւոյ, հասանի և ի հօր արկանիս։ Յովհաննէսն էր առաջին անգամ անապատում չափաւորութեան և պարզութեան քարոզ հնչեցնողը և բոլոր դասակարգերին իրենց պարտքն և իրաւունք հասկացնողը։ Իսկ նրա ետեւից գալիս էր Աստուածորդին, զարդացած և հասունացած, երեսնամեայ հասակով պաշտօնապէս յայտնուելու և սկսելու իւր յաղթական քարոզը։ Դարձեալ ձմեռ էր, մարդկանց կեանքի անարդարութիւն և անհաւասարութիւն պարզող եղանակը, երբ Փրկիչը եկաւ և մկրտուեց Յովհաննէսից։ Տիրով շաւիղը արդէն որոշ չափով պատրաստուած էր, լրացել էր ժամանակը և հասել Աստուծոյ արքայութիւնը, մի միայն ապաշխարհել և Աւետարանին հաւատալ էր պահանջուում։ Եկաւ նա, որ անարգեց միայն հացով և հացի համար ապրելը, որ մերժեց յանցանքին և չարութեան ժրկրպաւորութիւն տալը, թէ և այդ բանի փոխարէն նրան խոստացուում էր ամենայն իշխանութիւն և փառք։ Այսպէս տացուում էր ամենայն իշխանութիւն և փառք։ Այսպէս հոգով զօրացած Յիսուսը Գալիլեա դարձաւ և նրա հրուշակը տարածուեց ամբողջ գաւառում և սկսեց ուսուցանել ժողովրդին և փառաւորուեց բոլորից։

Հաղարաւոր տարիներ մարդիկ տօնում են Քրիստոսի ծնունդն ու յայտնութիւնը։ Հաղարաւոր տարիներ եկեղեցին հնչում է «Փառք ի բարձունս» բայց ոչ անարդարութիւն հնչում է «Փառք ի բարձունս» բայց ոչ անարդարութիւն վերացուեց, ոչ անհաւասարութիւնը քնջուեց, ոչ մարսւր և ճշմարիտ հաւատ վերահաստատուեց և ոչ էլ

խաղաղութիւնը թաղաւորեց, որովհետեւ ապաշխարելու
և Տիրոջ ճանապարհը պատրաստելու շնորհք և վճռակա-
նութիւնը չունեցանք, մեր սովորական արածներէն և
անարդարութիւնն ըստանալով չը կարողացանք և ահա
այսօր էլ հեռու է մեզանից խաղաղութիւնը, պատրաստ
չէ և խոսքն է ձշմարտութեան ճանապարհը և ուղղուած
չեն նրա շաւիղները: Դարձեալ ձմեռ է, դարձեալ գաժան
ցուրտ ու սառնամանիք, մարդիկ դարձեալ գողալով
ցրտից սարսափելով եկեղեցի են վազում Տիրոջ շաւիղի
պատրաստութեան պատուէրը լսելու, բայց կարծէք այս
անգամ պէտք է որ կարողանանք ասել, «ժամանակը
լրացաւ և հասաւ Աստուծոյ արքայութիւնը, մաքրուեցէք
ձեր մեղքերից, ապաշխարեցէք և Աւետարանին հաւա-
տացէք»: Հաւատացէք, որ թէ և ցուրտ է, բայց մօտ է
Աւետարանի թաղաւորութիւնը, մօտ է դարունը:

Ա. Տ. Վ. Մ.



ՔԱՂՈՒԱԾՔ Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԻՅ

(С.-Петербург. Вѣдомости 1904 г. № 357)

... Կեանքը միմիայն մէկ նպատակ ունի, ձգտել դէպի
այն կատարելութիւնը, որ ցոյց տուեց մեզ Քրիստոս՝ ա-
սելով, «Եղէք կատարեալ, որպէս ձեր երկնաւոր Հայրը
կատարեալ է»: Մարդուն մատչելի այս միակ նպատակը
խրադործւում է ոչ թէ սինակեցութեամբ կամ ճգնու-
թեամբ, այլ սիրոյ հաղորդակցութիւն հաստատելով բոլոր
մարդկանց հետ: Ուղիղ հասկացուած այս նպատակին
ձգտելուց են յառաջանում մարդկային բոլոր օգտա-
կար դործերը և դրա համեմատ են վճռում բոլոր հար-
ցերը...

... Այն սովորական և հասկանալի հարցը, «արեւ եմ
ես արդեօք այն բոլորը, ինչ որ պահանջում է ինձնից